Տեղեկանք գործող օրենքի լրացվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 5. Պետական նպաստների տեսակները

1. Սույն օրենքով սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.
1) ընտանեկան նպաստը.
2) սոցիալական նպաստը.
3) հրատապ օգնությունը.
4) երեխայի ծննդյան միանվագ նպաստը.
5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը.
6) ժամանակավոր անաշխատունակության նպաստը.
6.1) մայրության նպաստը.
6.2) ծննդկանի առողջության պահպանման համար՝ հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստը:
7) ծերության նպաստը.
8) հաշմանդամության նպաստը.
9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստը.
10) թաղման նպաստը:
2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված նպաստի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այլ օրենքներով:

Գ Լ ՈՒ Խ 5.1
ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

Հոդված 23.3 Մայրության առողջության պահպանման համար միանվագ նպաստի իրավունքը

1. **Վարձու աշխատող, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված և չաշխատող կանանց՝ յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո պետական պատվերի շրջանակներում պարտադիր տրամադրվում է հավաստագրով սահմանված անվճար բժշկական հետազոտության միանվագ նպաստ, որն իր մեջ ներառում է մայրական կաթի որակի, Ca և D վիտամինների, արյան հետազոտությունները և կրծքի սոնոգրաֆիա կամ մամոգրաֆիա:**
2. **Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հավաստագիրը տրամադրվում է մինչև յուրաքանչյուր ծննդաբերության հետծննդյան շրջանի ավարտը: Հավաստագիրն ուժի մեջ է մտնում հետծննդյան շրջանի ավարտի օրվան հաջորդող օրը և գործում է մեկ տարի ժամկետով:**

3. **Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հավաստագրի տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:**